ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Տեքստուորլդ ՍՊԸ	Յունիֆորմ	Տեքստուորլդ ՍՊԸ	Ձմեռային դեղնականաչավուն կիսավերարկու արհեստական մորթուց կարված օձիքով: Կիսավերարկուի երեսացուն դեղնականաչավուն գույնի 2311 արտիկուլի կիսաբրդյա գործվածքից: Գործվածքի 1մ2 մակերասային խտությունը՝ 317գր, բաղադրությունը՝ 67% բուրդ, 33% պոլիէսթեր: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, ծալվող օձիքից և թևքերից: Օձիքը հանովի արհեստական մորթուց կարված: Ձևվածքն ուղիղ ուրվագծով, կոճկվում է 5 հատ դեղնականաչավուն գույնի կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Թևքերը երկկարանի ներկարված: Կիսավերարկույի և թևքերի եզրերը ծալված և

				վրակարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոճկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: Ունի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: Տաք ներդիրը՝ սինտեպոն /թևքերը նույնպես/, օձիքից մինչև գոտկատեղ ներդիրը երկտակ: Կիսավերարկուի աստառը՝ մետաքսյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, որը մզդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Կիսավերարկուի օձիքին կոճկվում է լրացուցիչ մորթե օձիք, աստառով և երկշերտ ներդիրով: Օձիքը կոճկվում է լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և կիսավերարկուին կարված 5 կոճակներով: Կիսավերարկուի կոճակները՝ լանջափեշերին 18մմ, օձիքին և ծոցագրպանին 15մմ տրամագծով, պատրաստված ջերմադիմացկուն /չհալվող/ նյութից, 4 կարանցքներով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկկողմանի կարվող, գույնը՝ դեղնականաչավուն: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Ապրանքը պետք լինի պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերի չափսերը պետք է

				համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1	ООО Тексуорлд	Униформ	ООО Тексуорлд	Зимнее желтовато-зеленое полупальто с воротником из искусственного меха. Лицевая часть полупальто из полушерстяной ткани артикул - 2311 желтовато-зеленого цвета. Поверхностная плотность ткани 1м2 - 317 г, состав - 67% шерсть, 33% полиэстер. Полупальто состоит из центральных застегивающихся бортов, спинки, отложного воротника и рукавов. Воротник снимаемый изготовлен из искусственного меха. Форма прямого кроя, с 5 желтовато-зелеными пуговицами и петлями, пришитыми на потайном крае. Наклонные карманы, вшитые по бокам бортов, на присоединенительном шве воротника крепится петля для подвешивания. Рукава двухшовные вшитые. Края полупальто и рукавов сложены и прошиты. Сложенные края и рукава сложены и проштампованы. Во

				внутренней части левого борта пришивается внутренний карман, который застегивается на 1 пластмассовую пуговицу и петлю, а на внутренней стороне пришивается ярлыки-размерники товара. По бокам талии пришиты 2 шлевки. Имеет ремень с пластиковым ремешком и 2 шлевки. Внутренний утеплитель - синтепон (рукава тоже), от воротника до талии двойная вставка. Подкладка полупальто из шелковой желтовато-зеленой ткани, которая прошита синтепоном, диагональными швами. На воротник полупальто пристегивается дополнительный меховой воротник с подкладкой и двухслойной вставкой. Воротник крепится к дополнительному слою 5 пришитыми петлями и 5 пуговицами, пришитыми к полупальто. Пуговицы полупальто: 18 мм на бортах, 15 мм на воротнике и нагрудном кармане, изготовлены из термостойкого (не плавящегося) материала, с 4 швами, края под углом углам, с двух сторон отшлифованы, цвет желтовато-зеленый. Внешний вид в соответствии с утвержденным образцом. Изготавливаются от 44/2 до 64/6 размера. На товаре должна быть нанесена маркировка, на ярлыке должно быть указано название товара, размер, название организации производителя, дата изготовления. Упаковка: трехслойные картонные коробки по 5 штук в коробках, ассортимент в прозрачных полиэтиленовых пакетах, в 1 пакете - 1 штука. Размеры коробок должны соответствовать размерам полупальто, чтобы полупальто не помялось. Коробки маркированы, на

				ярлыках должны быть указаны наименование, количество, размеры, наименование производителя, месяц изготовления и дата изготовления.